ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ապրիլի 4-ին, կիրակի.—Ծաղկազարդ.

Օրվա մեծ տոնի առիթով Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Երեկոյան Մայր տաճարում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ և ավանդական հանդիսությամբ, կատարվում է «Դռնբացէք»-ի սրտառուչ արարողությունը:

* * *

Ապրիլի 8-ին, Աւագ հինգշաբթի.—Յիշատակ ընթրեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Մայր տաճարում միջօրեի ս. պատարագ է մատուցում տ. Հովհաննես քհն. Մարուքյանը: «Հայր մեր»-ից առաջ բեմից Մայր տաճարի լուսարարապետ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը ընթերցում է օրվա մեծ տոնի առիթով գրված ս. Բարսեղ Հայրապետի մեծ աղոթքը:

Երեկոյան ժամը 17-ին Մայր տաճարում, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, կատարվում է «զկարգ Ոտնլուային», իսկ «ի գիշերին՝ հսկումն է»: Հսկումի արարողությանը նախագահում է Վեհափառ Հայրապետը և ընթերցում առաջին Ավետարանը:

Հսկումի արարողության ժամանակ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը «Փառք ի բարձունս»-ից առաջ քարոզում է՝ «Ո՛վ Յուդա, համբուրելո՞վ մատնես զվարդապետն» բնաբանով՝ բացատրելով մատնության և խաչելության խորհրդի հոգևոր, փրկարար նշանակությունը:

Եկեղեցին լիքն էր հավատացյալների բազմությամբ, որոնք մինչև գիշերվա ժամը 23-ը երկյուղած բարեպաշտությամբ հետևվում էին սրբազան ու սրտառուչ արարողությանը:

* * *

Ապրիլի 9-ին, Աւաղ ուրբաթ.—Յիշատակ չարչարանաց և խաչելութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Առավոտյան ժամը 10-ին Մայր տաճարում կատարվում է չարչարանաց և խաչելության կարգը ըստ Տոնացույցի, ողջ միաբանության և ուսանողության մասնակցությամբ:

Երեկոյան ժամերգությանը Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվում է թաղման կարգը և ապա Մայր տաճարի շուրջ՝ եռադարձ «Թափօր թաղմանն», հավատացյալների հոծ բազմության ներկայության:

* * *

Ապրիլի 10-ին, Աւագ շաբաթ.—Ճրագալոյց Զատկի.

Առավոտյան ժամերգությունը պաշտվում է Մայր տաճարում:

Երեկոյան Վեհափառ Հայրապետը նախագահում է Մայր տաճարում Զատկի Ծրագալույցի արարողությանը և ընթերցում Արարչագործության պատմությունը Ծննդոց գրքից:

Հոգևոր ճեմարանի ուսանողները ս. սեղանի բեմից ընթերցում են «Դանիէլ»-ը:

Ծրագալույցի հանդիսավոր ս. պատարագը մատուցում է տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը:

Ս. պատարագի ավարտին Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվում է Զատկի նախատոնակը և Մայր տաճարի կամարների տակ հնչում է հաղթական «Այսօր յարեաւ» հոգեզմայլ շարականը:

Արարողության ավարտին Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվում է Վեհարան, ուր օրհնում է միաբանությանը:

*
* *

Ապրիլի 12-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Խորեն վրդ. Էլչուճյանը: Հավարտ ս. պատարագի տեղի է ունենում «հոգեհանգիստ՝ վասն համօրէն ննջեցելոց»:

*
* *

Ապրիլի 14-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ հին տոմարով Զատկի սրբազան արարողություններին մասնակցելու համար Օրջոնիկիձե մեկնեցին տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը և Արարատ սրկ. Գալստյանը, Կիրովաբադ՝ տ. Նշան քհն. Բեյլերյանը և Արտաշես սրկ. Մուշեղյանը, իսկ Զալդր (Հյուսիսային Կովկաս)՝ տ. Կարապետ քհն. Հովնանյանը և Ճավարշ սրկ. Աշուրյանը:

*
* *

Ապրիլի 18-ին, կիրակի.—Կրկնազատիկ. Նոր կիրակէ.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Օշին վրդ. Նիկոլյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում Քրիստոսի հարության հոգևոր, փրկագործ նշանակության մասին:

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվում է հոգեհանգիստ՝ «ի յիշատակ բիւրաւոր նահատակացն մերոց համաշխարհային առաջին և երկրորդ պատերազմաց»:

*
* *

Ապրիլի 24-ին, շաբաթ.—Յիշատակ բիւրաւոր նահատակացն մերոց, որք կատարեցան յընթացս համաշխարհային առաջին պատերազմի.

Ապրիլյան եղեռնի 56-րդ տարեդարձի առիթով Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը:

Ս. պատարագին ներկա է Վեհափառ Հայրապետը:

Ս. պատարագին ներկա են նաև Մայր Աթոռի ողջ միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսները, ուխտավորներ, մայրավանքի պաշտոնեությունն ու աշխատավորությունը: «Հայր մեր»-ից առաջ քարոզում է պատարագիչ սրբազանը՝ «Ո՜ տայր զգլուխ իմ ջուր, եւ զաչս իմ աղբեւրս արտասուաց, եւ լայի զժողովուրդս զայս՝ զտիւ եւ զգիշեր եւ զվիրաւորեալս դստեր ժողովրդեան իմոյ» (Երեմ. Թ 1) բնաբանով, ոգեկոչում է հիշատակը Ապրիլյան եղեռնի մեծ նահատակների, որոնք ընկան «վասն Յիսուսի և վասն հայրենեաց» անհավասար մարտում:

Քարոզիչ սրբազանը իր խոսքի մեջ շեշտում է այն միտքը, թե հայ ժողովուրդը կարողացավ դիմանալ մեծ փոթորկին իր հավատքի շնորհիվ, կարողացավ իր նահատակությունը վերածել հաղթանակի, և այսօրվա մեր վերածնած հայրենիքը հավերժական հուշարձանն է մեր նահատակներին:

Ս. պատարագի ավարտին Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվում է Մայր տաճարի հյուսիսային կողմում կանգնեցված նահատակաց հուշարձանը, որը ծածկված էր թարմ ծաղիկներով, և նախագահում հոգեհանգստյան հանդիսավոր արարողությանը, որին ներկա է լինում նաև հավատացյալների և ուխտավորների հոծ բազմությունը երկյուղած բարեպաշտությամբ և հարգանքով:

Ժամը 15-ին Մայր Աթոռի միաբանությունն ու հոգևոր ճեմարանի ուսանողությունը ուխտի են գնում Ծիծեռնակաբերդ՝ Ապրիլյան նահատակների հուշարձան, և կատարում հոգեհանգիստի արարողություն՝ իրենց հարգանքի տուրքը մատուցելով մեր նահատակների խնկելի հիշատակին:

*
* *

Ապրիլի 25-ին, կիրակի.—Աշխարհամատրան. Կանաչ կիրակի.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հակոբ քհն. Հակոբյանը:

Ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվում է

Մայր տաճար՝ ԱՄՆ-ից, Արգենտինայից, Եգիպտոսից, Լիբանանից ժամանած ուխտավոր հավատացյալների ուղեկցությամբ:

Վանքի շրջափակը և Մայր տաճարը լիքն են հավատացյալ ու խուռներամ բազմությամբ, որոնք խանդավառորեն և երկյուղած բարեպաշտությամբ ողջունում են Հայոց Հայրապետին:

«Հայր մեր»-ի ժամանակ քարոզում է Վեհափառ Հայրապետը Աշխարհամատրան կամ Կանաչ կիրակիի խորհրդի և հոգևոր նշանակության մասին՝ շեշտելով առաքելական դարում քրիստոնեության հաղթական տարածումը հին աշխարհում, ինչպես նաև Հայաստանում՝ ս. Թադեոս և ս. Բարթողիմեոս առաքյալների քարոզությամբ և նահատակությամբ:

Ժամը 15-ին Վեհափառ Հայրապետը բարեհաճում է Իրեն սեղանակից դարձնել՝ ԱՄՆ-ից՝ Հ. Բ. Ը. Միության երբեմնի վարիչ-քարտուղար Գրիգոր Կիրակոսյանին, ԱՄՆ-ի Այնթապցիների հայրենակցական միության վարչության ատենապետ Կարապետ Սյուլահյանին և Կահիրեի «Ջահակիր» շաբաթաթերթի խմբագիր Ս. Պալայանին, որոնք ուխտավորաբար գտնվում էին ս. Էջմիածնում և մայր հայրենիքում:

*

* *

Ապրիլի 26-ին, երկուշաբթի.—Այսօր, ժամը 13-ին, Վեհափառ Հայրապետը այցելում է՝ Հայաստանի նկարչի տան սրահում բացված սփյուռքահայ անվանի նկարիչ Սարգիս Խաչատուրյանի ստեղծագործությունների ցուցահանդես:

Ցուցահանդեսում տեղ էին գրավել Հընդկաստանի և Ցեյլոնի վեց ժայռափոր տաճարների և այլ մենաստանների որմնանկարների վավերական պատճենները:

Հանգուցյալ արվեստագետի սույն ստեղծագործությունների պատճենները 1937 թվականից ի վեր տասնյակ տարիներ պահպանվելուց հետո Հայաստան է բերել արվեստագետի այրին՝ ամերիկահայ նկարչուհի Վավա Խաչատուրյանը:

Վեհափառ Հայրապետին ընկերակցում էին տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը և Հակոբ սրկ. Գյոկչյանը: